

Աղջիկ մըն է կարծես հովը՝ գինով մուրտի բուրումեն՝  
Որ ջուրերուն վրայ կը դառնայ սարսուռի պարն հեշտագին:

Վանքին քովի արահետեն կարաւանները կ'անցնին,  
Բոժոժներուն երգը լալով գիշերին մէջ տրտմօրէն.  
Մինչ կըսպասեմ ջինջ լոյսերուն՝ որոնք ծագիլ կը յամեն.  
Ու կը լըսեմ շշուկներն՝ որ կը հծծեն մէջը ցանկին:

Կիրճին խորը, ժայռին ծոցն է գիւղանըկարը փռուած,  
Տարտամօրէն, հսկայական, արծիւի մը ձեւերով,  
Մագիլները խորասուզած խորշերու մէջ մըթամած:

Արբշիռ բոյրէն՝ գոր կը բերէ ինծի առտուն անխըռով [1],  
Ես կ'երագեմ ծառերուն տակ ու կըսպասեմ խօլաբար,  
Լոյս պարիկին՝ որ իղծերըս պըսակելու պիտի գար:

## 12. ԳԵՏԱՓԻ ԵՐԱԶԱՆՔ

Գիւղն համօրէն կը մըրափէ ծոցն արեւոտ ժայռերուն.  
Տիւանդորրի պահն ըմպած է մեղկ հեշտութիւն մը սիւքի,  
Որ ջուրերուն վրայ կը ցանէ գինովի դողն իր թրթռուն,  
Գետն համբոյրի մը երագով դէպ ի ափունք կը թեքի:

Գետեզերեայ ծառաստաններ, միջօրետքի այս պահուն,  
Ինձ անծանօթ թաւուտքներէ կը խրկեն բոյրն հեշտանքի,  
Որ յամրօրէն կը ծաւալի ծաղիկներէն այն լըքուն,  
Ասդին անդին տարտըղնըւած՝ որոնց հոգին կը ցամքի:

Եւ հընամի ծառեր գիւմրիւթ միայնութեանց ընդմէջէն,  
Կ'արտածորեն մուշկի բոյրեր ու ժպիտներ ալ բոսոր.  
Կիսամըրափ կ'երագեմ, գիս աղաղակներ կը կանչեն...

Ձայներ՝ դիւթիչ աշխարհներէ, տարտա՛մ, անո՛յշ, հեռաւո՛ր՝  
Որոնք անդին գիս կը տանին երանաստան մը բաղձոտ  
Ու կը նիրհեմ արբշիռ՝ հովին դիւթիչ նեկտարն ըմպած հոտ: